

374
—
0-45

574
0-45
64

23

0 120 - 10

ԱՐՏԱՅԻՍ ՕՀԱՆՁՆՆԵՐՆՑ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԿԱՐԻԲԸ

300
1671-02

1003
12510

ԳԻՆՆ Է 3 ԿՈՊԵԿ

(«Մշակ»-ի քառամսեակի առիթով)




Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրադարձ տպարան «Է Գ Օ Խ Ա» Մուգեյսկի պեր. № 8
1912

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎ

(Հայաստանի Հանրապետության Կառավարության հրամանով)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԻ ԲԱՆԴԱՐԱՆԻ ԿԱՐԳԱՆԱԳԱՐՈՒՄԻ

1918

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՄԵՆԱԴՈՒՄԻ ԿԱՐԳԱՆԱԳԱՐՈՒՄԻ

(«Մշակ»-ի քառասունամյակի առիթով)

Ես «Մշակի» խմբագրութեան անկեղծ բարեկամ-
ներիցն եմ *) և այդ պատճառով այս անգամ իսկութիւնը
ուզում եմ ասել նրա երեսին:

Յօրելեաններ տօնելը մեղանում, վերջերքս կար-
ձէք թէ ստացել է բննֆիսի բնաւորութիւն: Ինչպէս
որ դերասանները պարտաւոր են խաղալ հերթով կա-
տարող իրենց ընկերներից որեւէ մէկի բննֆիսին,
այնպէս էլ, ինչպէս երևում է, յօրելեանացաւով և ֆօն-
դացաւով բռնած մեր ինտելիգենցիան պարտաւորել
է հերթով տօնել մէկմէկու յօրելեանը և մէկմէկու
գովարանել, ծափահարել, ֆօնդեր կազմել... Այժմ բե-
ննֆիսի հերթը «Մշակին» է և տեղից վեր կենողը
ծափահարում է ու գովարանում:

Ես սովորական ծափահարողներից, սովորական
փառաբանողներից չեմ:

«Մշակի» քառասունամեակի առիթով իմ ծափահա-
րութիւնները և փառաբանութիւնները համարում եմ
միանգամայն անժամանակ:

«Մշակի» քառասունամեակի առիթով ծափահարող
ները և փառաբանողները արդեօք գիտակցօրէն են
ծափահարում ու փառաբանում, ես հաւատացած եմ, որ
նրանցից անգին մեծամասնութիւնը ծափահարում և
փառաբանում է միամտաբար, հետևողականութեամբ
և իրենց անձնական կամ փառասիրական հաշիւները
ի նկատի ունենալով:

*) Առաջին թղթակցութիւնս «Մշակում» տպւել է արանից
մօտ 19 տարի արագ՝ Գրիգոր Արծրունու ժամանակով:

Ծափահարողները արդեօք գիտակցում են թէ ո՞ւր են ծափահարում... Ո՞վ էր «Մշակի» հիմնադիրը, ի՞նչ պիտի սիրտ ու հոգի ունէր նա, ի՞նչ հողի վրա էր դրուած «Մշակը» նրա հիմնադրի օրով և ուրիշներ են նրա այժմեան փոխանորդները, ի՞նչ պիտի սիրտ ու հոգի ունեն նրանք և ի՞նչ հողի վրա է դրուած «Մշակը» այժմ։ Երջանկայիշատակ Գրիգոր Արծրունու մաքրահոգութեամբ սկսած, դուռ գաղափարական հողի վրա դրած գործը նրա այժմեան փոխանորդների օրով դրած է դուռ վաճառականական, նոյն իսկ աւելի քան վաճառականական հողի վրա. ժողովրդի շահերի մասին մտածելուց բացի, իր անձնականի մասին նոյն իսկ չըմտածող հիմնադրին յաջորդողները մտածում են համարեա թէ միմիայն իրենց անձնականի մասին, իսկ ժողովրդի շահերը նրանց համար ունեն շատ քիչ նշանակութիւն։ Տարաբախտաբար այսպէս է ասում դառն իրականութիւնը։ Չընայած որ մի քանի անգամ փաստերով ապացուցեց, որ շանտաժիստ առևտրականները կողոպտում են հայ ժողովրդին իրենց խաբեբայական յայտարարութիւններով, «Մշակի» այժմեան խմբագրութիւնը շարունակեց կանգնած մնալ հայ ժողովրդի թշնամու կողմը՝ ծախել հայ ժողովուրդը Լօձի, Վարշավայի, Պետերբուրգի շանտաժիստներին՝ իր գրպանը լցնելու, իր նիւթականը աւելացնելու համար... Դուք ի՞նչ կանւանէք այն հոգևորականին, որ եկեղեցու կամ վանքի երեք քառորդը աղօթատուն կամ գաղափարի տաճար դարձնելուց յետոյ, թոյլ տար իրեն միւս քառորդը դարձնել կեղծ ապրանքների վաճառատուն՝ թէկուզ նոյն եկեղեցու կամ վանքի եկամուտները աւելացնելու համար... «Մշակի» խմբագրութեան այդ յանցանքը աւելի ծանր է քան սովորական մատնութիւնը, որովհետև սովորական մատնիչները դժբախտացնում, նիւթապէս քայքայում են մի կամ միքանի հոգու, իսկ «Մշակի» այժմեան խմբագրութիւնը տղելով շանտաժիստների խաբեբայական յայտարարութիւնները, դժբախտացնում, նիւթապէս քայքայում է մի ամբողջ ժողովուրդ։

Ֆիսաների խաբեբայական յայտարարութիւնները, դժբախտացնում, նիւթապէս քայքայում է մի ամբողջ ժողովուրդ։ Նոյնիսկ այս օրերում, երբ հրապարակի վրա է դրած «Մշակի» քառասնամեակը տօնելու հարցը, «Մշակի» խմբագրութիւնը առանց ամաչելու արդէն տպել է ամենախայտառակ, բացարձակ խաբեբայական յայտարարութիւն՝ իբր թէ ուղարկում են 600 առարկա 3 ռ. 90 կոպեկով, *) որոնցից միայն առաջին առարկան իբր թէ արժի նոյն գինը (ուրեմն մնացած 599 առարկայ ուղարկում են ձրիաբար...???)։ Իսկ հետևանքը... «Մշակի» խմբագրատան մէջ աշխատողներից մի երկուսի կարծիքով ոչ մի նշանակութիւն չունի, որովհետև հայ ժողովուրդը կարդալ չըզիտէ, իսկ կարդալ իմացողներն էլ իբր թէ չեն հաւատում։ Բայց ոչ։ Ընթերցող հասարակութիւնը նշանակութիւն է տալիս տպած խօսքին և այսպիսի արտասովոր լուրերը, չը նայած ժողովրդի անգրագէտ լինելուն, տարածւում են ժողովրդի ամեն խաւերում կայծակի արագութեամբ, չափազանցաբար բաւերով։ Իբրև փաստ առաջ եմ բերում մի օրինակ, որպէսզի ընթերցողը տեսնի թէ ժողովուրդը ինչպէս է սիրում լուրերը չափազանցացնել։ Բարոզածներիս վերաբերմամբ կամենալով խօսքից անցնել գործի, սրանից դեռ տասն և եօթ տարի առաջ, ես ընտրեցի հայութեան ամենախաւար անկիւններից մէկը և գնացի ամենքից մոռացած այդ գաւառը՝ իրենց մայրենի լեզուն մոռացած հայերին լեզու սովորեցնելու, գրագիտութիւն տարածելու։ Բացի սովորական դասերը, երեկոններին տեղի էին ունենում դասեր հասակաւորների համար. հասակաւոր աշակերտներից մէկը խօսք բացելով հայկական կոտորածների, ազգի թիւը պակասելու մասին, հարցրեց թէ ի՞նչ ճար կարելի

*) «Մշակ» 1912 թ. № 20, 24, 28 և 32. Նոյնատեսակ խաբեբայական յայտարարութիւններ «Մշակում» տպւել են նաև ուրիշ շատ համարներում, մանաւանդ անցեալ տարի։

է անկէ՝ ազգի թիւը աւելացնելու համար. ես յայտնեցի՝ կարծիրս՝ պատասխանելով հետեւեալը— «Երեւի, կաթողիկոսը իրաւունք կտա հայերին մէկի փոխարէն երեք կին ունենալ»։ Եւ այդ իմ անմեղ կարծիրը, միամտաբար արտասանած երեւիւն, ժողովուրդը, չընայած իր անգրագէտ լինելուն, հետզհետէ չափադանցացնելով տարածեց ամբողջ գիւղը, շրջակայ գաւառները, իբր թէ «Մեր վարժապետին կաթողիկոսից քուդք ե եկել, որ ամեն մի հայ պէտք է 3 կին ունենա»։ Եւ երեակայեցէք, 120 վերստ հեռւորութեան վրայից 3 օրից յետոյ եկան ստուգելու այդ լուրը, որպէսզի 3 կին ունենան... Ի՞նչ կը լինէր ժողովրդի գրութիւնը, եթէ ասէի «ճիշտ է»։ քանի՛ հարիւրաւոր ընտանիքներ պէտք է դժբախտանային այդ մի բառի պատճառով։ Այժմ «Մշակի» խմբագրութիւնը տպելով վերոյիշեալ բացարձակ խաբեքայական յայտարարութիւնը, արդեօք չէ՞ ուզում ասած լինել թէ «ճիշտ է», որով պատճառ է դառնում հարիւրաւոր, գուցէ և հազարաւոր ազգատ ընտանիքների նիւթապէս քայքայելուն։ Այդպիսի յայտարարութիւն տպելուց յետոյ, լուրը չափազանցացնելով աւարածելով ամեն տեղ, արդեօք միմիանց չէ՞ն ասում հետեւեալ բառերը — «Աղա Գիքօ, Մարտօ, Ալէք, աչքներդ լո՛ւս, արքայութիւնի դուռ ա բացէ մեզ համար. գաղէթումը գրած ա որ վեց հազար բան ծախում են 3 մանէթ 18 շահով, էլ ոսկէ սահաթ, ոսկէ բլազուկ, բուխանդներով մատնիք, արխալուխ, շալվար, ինչ ուզես կայ. չուլ-փալասդ ծախի, փող շինի, գնանք գրեհնք, աղբէնք մօտս ա»։ Իսկ գրելուց, ամիսներով սպասելուց յետոյ երբ կստանան 600 վրթիւներ, այն ժամանակ, երեակայում եմ, իրենց չուլ-փալասը ծախելով այդ զիբրիները բերել տուղները ինչպիսի սարսափելի հայհոյանքներ պէտք է արտասանեն «Մշակի» խմբագրութեան հասցէին, որ տպելով խաբեքայական յայտարարութիւնը, պատճառ դարձաւ այդ զիբրիները

ստանալու... Ինչ զմտմ ար քայից յղանաք զոգնեալ մամ «Մշակում» և ուրիշ հայ թերթերում տպուող խաբեքայական—շանտաժիստական յայտարարութիւնները միմիայն հայ ժողովրդից դժլում են տարեկան մօտ երեք միլիօն բուրլի... մար յոյս քոյգ քոյգ քոյգ քոյգ

Այո, տարաբախտաբար, «Մշակի» խմբագրութիւնը այսօր կանգնած է ժողովրդի թշնամու կողմը և նրան ծափահարողները անգիտակցաբար ծափահարում են հալ ժողովրդի քննամուն։

Բայց ի՞նչ անել. յուսահատու՞մ։— ոչ։

Ընդունելով որ մարդիկ սխալական են, որ ամեն բայլափոխում կարող են սխալներ կատարել, ես փափագում եմ, որ «Մշակի» այժմեան խմբագրութիւնը անպատճառ և շուտով ուղղի իր սխալը թէ պատմութեան և թէ կեանքի մէջ երբեմնապէս պատահում են դէպքեր, որ մարդիկ, գիտակցաբար թէ անգիտակցաբար, որեւէ յանցանք, նոյնիսկ մատնութիւն կատարելուց յետոյ երբ զղջում են, անցնում են ժողովրդի կողմը և սկսում են այնպիսի բարի գործեր կատարել, որով ոչ թէ միայն ներում է հին յանցանքը, այլ և նրանք դառնում են ժողովրդական հերոսներ, փառք ու պարծանքի առարկա։ Հայոց պատմութեան մէջ այդպիսի օրինակ հանգիստանում է Վարդան Մամիկոնեանը 5-րդ դարում, իսկ վրաց պատմութեան մէջ Օթարը («Դաւաճանութիւն» պիէտայի մէջ)։ Ես գիտեմ մի միջոց, որով «Մշակի» այժմեան խմբագրութիւնը իր յանցանքը քաւելուց յետոյ էլ դեռ կըդառնայ օրւա հերոս, փառք ու պարծանքի առարկա, անունը կանցնի հայոց պատմութեան մէջ և որով (այդ միջոցը կատարելով) հայերի համար կըսկսւի մի նոր դարագլուխ։

Ես առաջարկում եմ «Մշակի» խմբագրութեան ընդունած խայտառակ վաճառականութեան ձևը փոխել պատւաւոր վաճառականութեան ձևի, այն է «Մշակի» յօբեկանը տօնելու առիթով Ֆօնդի համար հաւաքելիք

ամբողջ գումարը, քեկուզ դա հասնի մինչեւ 100,000 ռուբլու, միանգամից յատկացնել հայ ժողովրդի ամենամեծ կարիքը՝ ընդհանուր գրագիտութեան հարցը օր առաջ իրականութիւն դարձնելու համար:

Ընթերցողներից գուցէ գտնեն այնպիսիները, որ քոնք կասեն—«հազիւ է ձեռքները 100,000 ընկել. հօ չե՞նք ժել, որ տան»։ Բայց եթէ մի փոքր հեռատեսութեամբ դիտելու լինենք, կը տեսնենք որ սա ոչ թէ միայն գլխովին է, ոչ թէ միայն խելօքութիւն է, այլ և ամենամեծ խելօքութիւնն է մինչև այժմ մեր կատարած խելօքութիւններից: Սօստովանում եմ, այդ խելօքութիւնը ես սովորել եմ ուրիշից, որի մասին ահա յայտնում եմ:

3 տարի սրանից առաջ, Տաշկենտում, իմ՝ այնտեղ եղած ժամանակ պատահեց հետեւալ զէպըր: Տեղական յայտնի հայ վաճառականներից մէկը մեծ քանակութեամբ շաքար գնեց, ապառիկ, փութը 7 ռ. 50 կոպէկով, և բոլորը միանգամից ծախեց կանխիկ, փութը 6 ռ. 80 կոպէկով. կամ թէ ուրիշ խօսքերով՝ ոսկու նման այդ ապրանքը ծախեց իւրաքանչիւր փութին 70 կոպէկ վնասով. նրան ծանօթ բոլոր վաճառականները եկան այն եղրակացութեան, թէ նա մտադիր է իրեն սնանկ հրատաքակել. նրա եղբայրը, որ նոյնպէս վաճառական էր, խիստ նկատողութիւն էր արել նրան հետեւալ բառերով—«թէ ասեմ գիտ ես, գիտ չես. թէ ասեմ խելօք ես, խելօք չես. ասիւր քեզ ի՞նչ ա պատահել, որ էդ տեսակ բան ես անում. մարդ էլ ոսկու նման ապրանքը փութին 70 կոպէկ վնասով կըծախի՞. երէխէ՞քդ ես սոված մնացել, վէքսի՞լդ ա պրօտեստ գնում, ի՞նչ խաբար ա...», խելացի վաճառականը ոչինչ չէր պատասխանել և մի քանի օրից յետոյ յայտնի եղաւ, որ նա դրանով ոչ թէ գոթութիւն էր արել, այլ՝ ընդհակառակը. յայտնեց որ նա եղել է ամենախելացի վաճառականը Տաշկենտի բոլոր վաճառականների մէջ, որովհետեւ շաքարը վնասով

ծախելով, այդ փողերով նա գնեց լաւ գնով ծախող ուրիշ ապրանք և մի քանի օրում այդ ապրանքը ծախելուց յետոյ ոչ քի միայն ծածկեց շաքարի վնասը, այլ և երեք այնքան աշխատեց:

Իմ առաջարկութիւնը «Մշակի» խմբագրութեան, ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ հետեւել վերոյիշեալ խելացի վաճառականի օրինակին:

«Մշակի» ֆօնդի համար հաւաքւող գումարը, դիցուք 100,000 ռուբլի, խմբագրութիւնը գետեղելով որեւէ բանկում, պէտք է օգտւի ընդամենը 3—4 % -ով, բայց գործադրութեան սեզ ղնելով, թէկուզ մի քանի ամսից յետոյ նա կ'օգտւի 15—20 % -ով, իսկ միքանի՝ 10—15 տարուց յետոյ, երբ ամբողջ աշխարհում չի մնա ոչ մի անգրագէտ հայ, «Մշակի» խմբագրութիւնը կ'օգտւի 100—200 % -ով:

Հաշիւները շատ պարզ են: «Մշակը» այժմ սպառւում է 3000—4000 օրինակ. ընդհանուր գրագիտութեան հարցի վերաբերմամբ խօսքից գործի անցնելուց յետոյ բաժանորդների թիւը հետզհետէ աւելանալով, շուտով կը տասնապատուի, իսկ 10—15 տարուց յետոյ կարող է հասնել մինչև 100,000-ի: Եւ այս թիւը չպէտք է համարել չափադանցութիւն, որովհետեւ իւրաքանչիւր 40 հային ընկնում է 1 «Մշակ»: Մի ըստէ ընդունենք թէ ես հաշիւներս մէջ սխալւում եմ. ընդունենք սպասած արդիւնքի կէսը, կէսի կէսը, դարձեալ կը տեսնենք որ խելօքութիւն է փողը գործադրութեան մէջ ղնելով օգտւել 20—40 % -ով, քան թէ որեւէ բանկում պահելով օգտւել 3—4 % -ով:

Նիւթական այսքան օգուտ կստանա «Մշակի» խմբագրութիւնը. այժմ տեսնենք թէ բացի «Մշակի» խմբագրութիւնից ուրիշ էլ ովքեր կ'օգտւեն:

Ինչքան որ կ'օգտւի «Մշակի» խմբագրութիւնը, համեմատաբար կ'օգտւեն նաեւ բոլոր հայ քերթերի խմբագրութիւնները. նրանք նիւթականի կողմից ապահովւե-

լով, կսկսեն վարձատրել բոլոր աշխատակիցներին, նոյն իսկ թղթակիցներին. ժողովրդի գրագէտ լինելու շնորհիւ հայ թերթերի, մանաւանդ հրատարակելիք գրքերի թիւը կը բազմապատկւի, որի շնորհիւ. տպարանական գործի հետ կապ ունեցող բոլոր մարդիկ—վիպասաններ, բանաստեղծներ, հրապարակասօսներ, ուսուցիչներ, դերասաններ, գրաշարներ, միքենավարներ, կազմարարներ, տպարանական բանւորներ, լրագրավաճառներ, գրախանութատէրեր, տպարանատէրեր, ձուլարանատէրեր, շատ գործ ունենալով, կուեննան բաւականաչափ փող, հետեւաբար որոշ չափով մարդավայել ապրուստ: Այժմ մեր մէջ գոյութիւն ունեցող միակ գիւղատնտեսական թերթը՝ «Գիւղատնտեսը» երբ հաղիւթէ 1200 օրինակ է տպւում և ֆնացած համարներն էլ վերջը ծախւում են որպէս հասարակ թուղթ՝ պրանքան 2 - 3 կողէկով, այն ժամանակ գրագէտ ժողովուրդը կը կարողանայ պահել նոյն իսկ 10 այդպիսի «Գիւղատնտեսներ», կօգտւի այդ թերթերի մէջ գրած օգտաւետ յօդւածներից, իր տնտեսութիւնը կը բարելաւի այդ թերթերի մէջ յիշատակւած հրահանգներով, հետզհետէ գիւղացին կը թողնի իր ֆնասակար սովորութիւնները—հարեցողութիւնը, թղթախաղը, դումարը, մէկմէկու ալտն ու դէգերը կրակելը, գողութիւնները, կը կարողանան ապրել առողջապահիկ պայմաններում, կուեննան ուսումնարան, թատրոն, գրադարան-ընթերցարան, հիւանդանոց, բժիշկներ, դերասանական խումբ և այլն, թերթերի և գրքերի միջոցով կը ծանօթանա քաղաքակիրթ և գիտական աշխարհի հետ, անմասն չի ֆնա գիտութեան բարիքներից և այլն և այլն: Վերոյիշեալ դասակարգերի զրութիւնը լաւ լինելով, լաւ կը լինի նաև բժիշկների և քահանաների զրութիւնը:

Այս բոլորը կատարւելուց յետոյ, մի մոռացէք, որ հարեւան ազգերը օրինակ կը վերցնեն ձեզանից, կը բարելաւի նաև նրանց զրութիւնը, նրանք էլ կառա-

ջանան մտաւորապէս, որոնց առաջադիմութիւնը օգուտ է և ձեզ:

Ապա հաշւեցէք այն հոգեկան մխիթարութիւնը, որ պէտք է զգան հայ գիւղացին, հայ գիւղկուհին, երբ հնարաւորութիւն կուեննան մէկմէկու նամակ գրել, յայտնել մէկմէկու իրենց դարդերը, սրտի կսկիծները, որոնք նամակները պանդխտութեան մէջ ստանալիս, կը համբուրեն այդ նամակները, կը սեղմեն իրենց կրծքերին և այդպիսով կառնեն իրենց կարօտը իրենց սիրելիներից... «Հայ կնոջ ազատութեան հարցի պաշտպան» պարոններ, մի բոպէ մտե՛լ էք անգրագէտ գեղջկուհու դրութեան մէջ և տեսե՛լ էք թէ նա ի՜նչպիսի դժոխային տանջանքներ է կրում անգրագիտութեան պատճառով, որը ուրիշի միջոցով իր դարդերը յայտնել չէ կարողանում, որովհետև ամաչում է...

Կարծում եմ, որ ընթերցողի համար պարզ է, որ այս ձեռնարկութիւնը առևտրական տեսակէտից շահաւետ գործ լինելով հանդերձ, միևնոյն ժամանակ մի ահագին, հսկայական բարեգործութիւն է, մի այնպիսի բարեգործութիւն, որի նմանը մինչև այժմ չէ կատարել ոչ մի հայ, մի բարեգործութիւն, որի առաջ կնսեմանան Սանասարեանը իր հիմնած վարժարանով, Ներսէս Ե. Աշտարակեցին իր հիմնած դպրոցով, Գէորգ Դ.-ը կամ Լազարեանը իրենց հիմնած ձեռնարաններով, բժշկ. Նաւասարդեանը իր հիմնած Կ. Հ. Բ. Ընկերութեամբ, զանազան Մանթաշեանները, Ժամհարեանները, Առաքել-ապերները և ուրիշները իրենց նախնականութիւններով, և այլն: Կարիք չեմ զգում մանրամասն յիշատակելու տպիւնութիւնից առաջացող սարսափելի չարիքները. բաւական է յիշել, որ միլիարդներ կ'անող անբարոյական կանայք և ուրիշ ձրիակերները, միլիոններ կ'անող բեկլամները, զբանցից ոչ պակաս «մարդու տուն քանդող» մօղաները, քէլէխները, պսակները, մահաւան և ամուսնախալու դէպքում կատարւող մեծա-

մեծ ծախսերը և ուրիշ ֆինանսական սովորութիւնները, այսքան յաճախակի կրկնուող սպանութիւնները, գողութիւնները և այլն և այլն՝ արդիւնք են ժողովրդի տգիտութեան՝ ժողովրդի անգրագէտ լինելուն։ Երբ մարդիկ կը հասնեն իսկական գիտակցութեան, նրանք շուտով կազատուեն ամեն տեսակ արհաւիրքներից։ Իսկ իսկական գիտակցութեան հասնելու համար ամենից առաջ հարկաւոր է ընդհանուր գրագիտութիւն։

Այս հարցը դրականապէս վճռելուց և կատարելուց յետոյ (երկի 10 տարուց յետոյ) «Մշակի» խմբագրութիւնը իսկապէս իրաւունք կունենա պահանջելու հայ ազգից տօնել իր գոյութեան 50-ամեակը և իրաւացի հպարտութեամբ, պարզ երեսով, բաց ճակատով, լայնացրած կուրծքով ամբողջ աշխարհի առաջ ասելու հայութեանը հետեւեալը.—

«Հայ ժողովուրդ, աւելի քան 4000 տարի բազմութիւն և բազմատեսակ թշնամիներիցդ ծւիկ-ծւիկ եղած, երբ ոչ ոք մի էական ճար չարեց քեզ, ես էի, որ ազատեցի քեզ քո ամենամեծ թշնամուց՝ տգիտութիւնից»։

«Աւելի քան 1600 տարի քրիստոնէական եկեղեցի, աւելի քան 11 դիւթին կաթողիկոսներ, 400 տարի գրականութիւն ունենալուց յետոյ, երբ ոչ ոք քեզ՝ հայ ազգի 90 տոկոսիդ չազատեց խաւարի մէջ խառնափելուց, ես էի, որ վառեցի այն հսկայական փառքը, որ քեզ միանգամից դուրս բերեց խաւարից, միանգամից բացեց քո մտքի աչքերը, միանգամից լուսաւորեց քո մտաւոր հորիզոնը...»

«Դարերով շարունակ անբախտ, քաղցած, կիսամերկ, սիրելի հայրենիքից տարագիր, արիւն արցունքներով ապրող դժբախտ ժողովրդիդ համար ես էի, որ զրեցի քո ապագա իսկական բախտաւորութեան առաջին հիմնաքարը...»

«Այն ժամանակ, երբ թշնամի դասակարգ էլ չը մնաց, որ քեզ չը կողոպտէր, ես էի, որ գործով ապա-

ցուցեցի, որ ես եմ քո իսկական բարեկամը։

Միմիայն այն ժամանակ իմ ձայնը կը միացնեմ ընդհանուր ձայնին՝ ասելով—«Կեցցէ հայ ժողովուրդը, կեցցէ նրա բարեկամ «Մշակի» խմբագրութիւնը»։

Այն ժամանակ շատ հաստատութիւններ և դրամատէրեր պէտք է մտածեն—«Ինչո՞ւ հեռատես չեղանք մենք չակսեցինք, որպէսզի այդքան ահագին փառքը մեզ պատկանէր...»

Այո, ես «Մշակի» խմբագրութեան անկեղծ բարեկամներին եմ և ուզում եմ որ այդ ահագին փառքը նրան պատկանի։

Գուցէ «Մշակի» խմբագրութիւնը հարց տա ինձ—«Ինչո՞ւ միմիայն մեզ էք առաջարկում, որ մենք մեր ֆօնդի համար հաւաքածը տանք ժողովրդին և չէք յիշեցնում, որ հայ գրականութեան 400-ամեակը տօնելու առիթով հաւաքելիք գումարն ևս միացնելի այս գումարին»։ Իմ պատասխանը այդ հարցին կը լինի հետեւեալը—«Այդ բանի դէմ ես ոչինչ չունեմ ասելու։ Եթէ այդ տեսակ բան պատահի, աւելի լաւ, որովհետեւ միացած ոյժերով գործունէութիւնը աւելի օգտաւէտ է։ Եւ եթէ կուզէք, ես կասեմ որ այդ գումարներին պէտք է աւելացնել նաեւ այն 10,000 ռուբլին, որով մտադրութիւն կա հրատարակել մինչև այժմ լոյս տեսած հայերէն գրքերի ցուցակը» (թէ՞ այդ գրքերից կազմել ցուցահանդէս)։

Հայ ժողովրդին ի՞նչ օգուտ այդ գրքի հրատարակութիւնից, կամ գրքերի ցուցահանդէսից. երբ հայ ժողովուրդը ունի հոգալու աւելի մեծ կարիքներ, 10,000 ռուբլի ծախս պահանջող մի գրքի հրատարակելը կամ ցուցահանդէսը աւելի քան շաալութիւն է։

Ներկայումս, երբ հրապարակի վրա է դրած ընդհանուր գրագիտութեան հարցը*) այդ 10,000 ռուբլին

*) Մտնուելի մէջ ես առաջին տեսակէտով հարցի առիթով գրել եմ անցեալ տարւոյ Մարտի 17-ին

համարեա թէ հրաշքներ կարող էր կատարել: Ընդհանուր գրագիտութիւն տարածելու համար, միջին թւով իւրաքանչիւր գիւղին 10 բուրլի ուղարկելով իբրև սկզբնական ծախս, մինք գրանով գրագէտ դարձրած կլինենք 1000 գիւղի ժողովրդի, կամ թէ ուրիշ խօսքերով մօտ 500,000 հայ (սկզբնական ծախսերը մինք հոգալով, մնացածը իրենք ուրախութեամբ կը հոգան, երբ կը հասկանան գրագիտութեան ճաշակը և նշանակութիւնը):

«Մշակի» խմբագրութիւնը իր համաձայնութիւնը տալուց յետոյ, անշուշտ, ոչ թէ միայն «Հօրիզօնի» խմբագրութիւնը—որը ղեկավարում է հայ գրականութեան 400-ամեակը տօնելու հարցը—այլ և բոլոր հայ հրատարակութիւնների խմբագրութիւնները, նաև վերոյիշեալ բոլոր դասակարգերը բարոյական պարտականութիւն պէտք է զգան օգնելու գործին իրենց ոյժերը, ներածիչաւ, որովհետև միայն «Մշակի» խմբագրութիւնը չէ որ օգտուելու է ընդհանուր գրագիտութիւնից սպասուող պտուղներից, այլ բոլոր հայ հրատարակութիւնների խմբագրութիւններն էլ և վերոյիշեալ բոլոր դասակարգերն էլ օգտուելու են. բացի այս, ի նկատի ունեցէք և այն, որ հարցը դրականապէս վճուելու դէպքում կգլուխըսեն շատերը հասարակութիւնից, որոնք ինքնաբերաբար, կտան իրենց նւէրները, ինչպէս որ մինչև այժմ տեւել են զանազան աղէտների ժամանակ...

Ֆրանսիական առածը ասում է «գործի սկիզբը գործի կէսն է». և ճիշտ, եթէ դուք կը սկսէք այս գործը, իմացած եղէք, որ գործի կէսը արդէն կատարւած է. գործը սկսելուց յետոյ դուք կը տեսնէք թէ ինչպէս ամեն կողմից կը թափւեն նւէրները, թէ ինչպիսի եռանդ և բարի նախանձ պէտք է առաջանա երիտասարդութեան, մանաւանդ զաւառական երկսեռ երիտասարդութեան մէջ, որոնք պէտք է աշխատեն մէկը միւսին գերազանցել իրենց բեղմնաւոր գործունէութեամբ: Համոզւած եղէք, որ գաւառներում գործողները իրենց

գործունէութեամբ կանցնեն կենտրոններում գործողներին:

«Մշակի» խմբագրութիւնը իր համաձայնութիւնը տալուց յետոյ, երբ կատարւած կլինի առաջին և ամենագլխաւոր գործը, այն ժամանակ կմնա կատարել երկրորդ և գլխաւոր գործը—գիմել կառավարութեանը թոյլտուութիւն խնդրելու՝ հիմնել «Հայերի մեջ գրագիտութիւն տարածող բնկերութիւն», որը իր ձեւերը ունենալ բոլոր բազմազան տեղերում, ընկերութիւնը իր սեփական օրգանը, տպարանը, ձուլարանը կայլն ունենալու իրաւունքներով. այնուհետև հեշտ է մտածել կատարելիք միւս անհրաժեշտ գործերի մասին, օրինակ, որ քաղաքներում պէտք է լինեն գլխաւոր կենտրոնները, (Թիֆլիս, Կ. Պօլիս, Թաւրիզ, Կահիրէ, Ժնև, Նիւ-Եօրք և այլն) ովքեր կարող են համարուել դասաւանդողներ, իւրաքանչիւր գիւղին քանի բուրլի ուղարկել իբրև սկզբնական ծախս, և այլն:

Գործի ձեռնարկելուց յետոյ գործը պէտք է սկսել ամենալայն ծաւալով, որովհետև եղած փորձերը ցոյց տւին, որ մասնակի փորձերով եական արդիւնք չի ստացւի:

Այժմ խօսքը պատկանում է «Մշակի» խմբագրութեան:

Սիրօւմ եմ յուսալ, որ «Մշակի» խմբագրութիւնը շուտով կ'աւելտի հայութեանը թէ ինքը համաձայնում է ժողովրդից ստացածը տալ ժողովրդին՝ թէկուզ իր անձնական շահը ի նկատի ունենալով:

Այդ դէպքում, ես կը ցանկանայի որ «Մշակի» ֆօնդի համար հաւաքւելիք գումարը հասնէր թէկուզ մի ամբողջ միլիօնի:

Իսկ հակառակ դէպքում, ես չէի կամենա որ իսկական ժողովուրդը ֆօնդին մասնակցէր թէկուզ մի կոպէկով...

Որևէ մէկի յօրելեանը տօնելու առիթով հասա-

բակութիւնը թող ապահովի յօրեկեարներին՝ հայ գրողներին, գործիչներին, բայց հայ գրողներն ու գործիչներն էլ փոխադարձաբար պարտաւոր են գործով ապացուցանելու որ իրենք ժողովրդի բարեկամներն են. մինչև այժմ մենք շատ ենք խօսել, շատ ենք գրել, քաջ ենք եղել միմիայն քղբեր մրոտելու մեջ, այժմ հերթը եկել է ցոյց տալու մեր քաջութիւնը խօսքից գործի անցնելու մեջ:

Վերջացնելով իմ ասելիքը, ամբողջ հայ երկսեռ ինտելիգենցիայի, բոլոր բարենպատակ ընկերութիւնների, հոգևոր բարձր իշխանութիւնների, մանաւանդ տաճկահայ գործիչների լուրջ ուշադրութիւնն եմ դարձնում այս հարցի վրա և խնդրում, որ «Մշակի» խմբագրութիւնը չը համաձայնանայ դէպքում ամեն կերպ աշխատել, որ այս հարցը դրականապէս և շուտով վճռուի որիշ որեւէ մէկի ձեռքով, որովհետև աններելի է մի ազգի ինտելիգենցիայի համար 400 տարի գրականութիւն ունենալուց յետոյ ունենալ ընդամենը 10 տօկոս գրագէտ ժողովուրդ, կամ թէ ուրիշ խօսքերով, եթէ այսպէս շարունակելու լինի մեր աններելի անտարբերութիւնը, ազգը ամբողջապէս կարող է գրագէտ դառնալ մօտաւորապէս 5500 քականից. այսպիսի դրութիւնը աւելի քան ամօթ է և խայտառակութիւն մի ազգի համար, որը դեռ յաւակնութիւն ունի ինքը իրեն կարծելու «ամենակուլտուրական ազգը ամբողջ Փոքր-Ասիայում»...



ՀՀ Ազգային գրադարան



NL0223813

52. 406